

Ucom Premier

Հատուկ դրույթներ և պայմաններ

Յուքոմ Պրեմիերը (UcomPremier) «ՅՈՒԲՈՄ»-ՄՊ ընկերության (Յուքոմ) ծառայությունների նկատմամբ բաժանորդների հավատարմությունն ամրապնդելու և նրանց գոհունակությանն առավել նպաստելու նպատակով իրականացվող ծրագիր է (Ծրագիր), որն ուղղված է ապահովելու բարձրակարգ սպասարկում և անհատական մոտեցում:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ծրագիրը մեկնարկում է 2018թ. դեկտեմբերի 25-ին և գործելու է անորոշ ժամկետով:

1.2. Յուքոմն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ միակողմանիորեն դադարեցնել Ծրագիրը՝ նախքան Ծրագրի դադարեցման օրը այդ մասին տեղեկություններ հրապարակելով Յուքոմի վեբ կայքում:

1.3. Յուքոմ Պրեմիերը բաժանորդներին տարբեր արտոնություններից օգտվելու հնարավորություն է ընձեռում, ինչպես նկարագրված է ստորև սահմանված հատուկ դրույթներում և պայմաններում (այսուհետ՝ Դրույթներ) և Ծրագրի վեբ կայքում:

1.4. Ծրագրի՝ Դրույթների 2-րդ կետով սահմանված մասնակցության չափանիշներին բավարարող Բաժանորդները մասնակցում են Ծրագրին անվճար հիմունքներով:

1.5. Ծրագրի՝ Դրույթների 2-րդ կետով սահմանված մասնակցության չափանիշներին չբավարարող մասնակիցները կարող են մասնակցել Ծրագրին՝ ձեռք բերելով Յուքոմ Պրեմիեր վճարովի ծառայությունը, որը նկարագրված է Յուքոմի կայքի www.ucom.am/premier էջում :

2. Ծրագրին մասնակցության չափանիշներ

2.1. Յուքոմ Պրեմիերը նախատեսված է.

- Յուքոմի կանխավճարային շարժական հեռախոսակապի, հետվճարային շարժական հեռախոսահակապի, ամսական բաժանորդագրությամբ շարժական հեռախոսակապի, Ծարժական Ինտերնետ ծառայության բաժանորդների համար, ովքեր վերոհիշյալ ծառայությունների դիմաց 12 օրացուցային ամիս անընդմեջ վճարել են ամսական ավելի քան 12500 ՀՀ դրամ (հաշվարկվում է Ծրագրին ներգրավվելու օրվան նախորդող ամիսների համար), ում վերոնշյալ ծառայությունները նշված ժամանակահատվածում վճարման կետանցի հիմքով չեն կասեցվել (ապասկտիվացվել), և ովքեր Յուքոմի նկատմամբ չունեն կուտակված պարտք, և

- Ֆիքսված կապի բաժանորդների համար, ովքեր ծառայությունների դիմաց 12 օրացուցային ամիս անընդմեջ վճարել են ամսական ավելի քան 28000 ՀՀ դրամ (հաշվարկվում է Ծրագրին ներգրավվելու օրվան նախորդող ամիսների համար), ում վերոնշյալ ծառայությունները նշված ժամանակահատվածում կասեցվել են (ապասկոխվացվել) ընդամենը ոչ ավել, քան 30 օր, և ովքեր Յուբոմի նկատմամբ չունեն կուտակված պարտք, և ովքեր օգտվում են Յուբոմ Triple Play կամ 4Play փաթեթներից և ևս մեկ հավելյալ ծառայությունից:

2.2. Սույն Դրույթները չեն տարածվում Յուբոմի կորպորատիվ ծառայություններից օգտվող բաժանորդների՝ իրավաբանական անձանց, ինչպես նաև ձեռնարկատիրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց վրա՝ անկախ որպես այդպիսին գրանցված լինելու փաստից, եթե այլ պայման համաձայնեցված չէ Յուբոմի և համապատասխան բաժանորդի միջև:

2.3. Այն բաժանորդները, ովքեր սույն Դրույթների համաձայն կարող են Ծրագրին մասնակցել 2.1 կետով սահմանված շարժական հեռախոսակապի, շարժական ինտերնետի կամ ֆիքսված կապի ծառայությունների մեկից ավելի առաջարկների շրջանակներում կատանան միայն 1 (մեկ) Ծրագրին մասնակցության իրավունք (Յուբոմ Պրեմիեր քարտ): Ծրագրին մասնակցության իրավունքի դադարման դեպքում, բաժանորդները կարող են ներգրավվել Ծրագրում մասնակիցների ընտրության միայն հաջորդ փուլի ընթացքում՝ 2.1 կետով սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում:

2.4. Ucom Պրեմիերի մասնակիցներն ընտրվում են Յուբոմի կողմից Ծրագրի մասնակիցների ընտրության յուրաքանչյուր փուլի ընթացքում՝ սույն Դրույթներով սահմանված չափանիշների հիման վրա: Ծրագրի մասնակիցների ընտրության յուրաքանչյուր հաջորդ փուլն իրականացվում է եռամսյակը մեկ: Բաժանորդների դիմում-հայտերի հիման վրա բաժանորդները կարող են դառնալ Ծրագրի մասնակից միայն 1.5 կետով սահմանված վճարովի հիմունքներով:

3. Արտոնություններ

3.1. Յուբոմ Պրեմիեր ծրագրի մասնակիցները կարող են օգտվել Յուբոմի մի շարք արտոնություններից, Ծրագրի գործընկերների կողմից առաջարկվող գեղչերից և հատուկ առաջարկներից, այլ առաջարկներից, որոնք պարբերաբար թարմացվում և հրապարակվում են Յուբոմի կայքի www.ucom.am/premier էջում:

3.2. Յուբոմն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխել Ծրագրի շրջանակներում առաջարկվող արտոնությունների ցանկը՝ այդ մասին տեղեկություններ հրապարակելով Ծրագրի վեբ կայքում:

4. Անվանական քարտեր

4.1. Ծրագրին մասնակից յուրաքանչյուր բաժանորդի առաջարկվում է UcomPremier անհատականացված քարտ (Անվանական Քարտ), որը հավաստում է բաժանորդի կողմից Ծրագրին մասնակցելու հանգամանքը:

UcomPremier

4.4. Անվանական Քարտի վավերականության ժամկետը մեկ տարի է: Անվանական Քարտի վավերականության ժամկետը լրանալուն պես Յուքոմը բաժանորդին տրամադրում է նոր Անվանական Քարտ, եթե բաժանորդը բավարարում է սույն Դրույթներով սահմանված պայմանները:

4.5. Յուրաքանչյուր բաժանորդ կարող է ունենալ միայն մեկ Անվանական Քարտ: Անվանական Քարտը պետք է օգտագործվի բացառապես քարտապանի կողմից (բաժանորդի, ում անունով տրվել է քարտը): Այլ անձի կողմից Անվանական Քարտն օգտագործելու դեպքում Յուքոմը և իր գործընկերներն իրավասու են տվյալ անձին չտրամադրել արտոնություններ, և Յուքոմն իրավասու է քարտապանին հեռացնել Ծրագրից:

4.6.

4.7. Անվանական Քարտի քարտապանները պարտավոր են անհապաղ տեղեկացնել Յուքոմին Անվանական Քարտի կորստի կամ գողության մասին:

4.8. Անվանական Քարտի՝ խաբեությամբ կամ անօրինական օգտագործման, ներառյալ՝ Յուքոմին, վերջինիս գործընկերներին կամ այլ բաժանորդներին խաբելու ցանկացած փորձի դեպքում, Անվանական Քարտի գործողությունը Յուքոմի որոշմամբ դադարեցվում է, և քարտապանը հեռացվում է Ծրագրից՝ առանց Յուքոմի կողմից իր որոշումը հիմնավորելու կամ պարզաբանումներ ներկայացնելու պարտավորության:

4.9. Մասնակցի կողմից վնասված Անվանական Քարտ ներկայացնելու դեպքում, Յուքոմը և վերջինիս գործընկերներն իրավասու են չընդունել այն: Վնասված Անվանական Քարտը Յուքոմի կողմից փոխարինվում է մասնակցի գրավոր պահանջի հիման վրա՝ վերջինիս անձը հաստատելուց հետո:

4.10. Անվանական Քարտը հանդիսանում է Յուքոմի սեփականությունը և ենթակա է վերադարձման քարտապանի բաժանորդային պայմանագրի դադարեցման պահին՝ անկախ դադարեցման պատճառներից, կամ, եթե քարտապանը ցանկություն է հայտնում դադարեցնել իր մասնակցությունը Ծրագրին: Քարտապանի բաժանորդային պայմանագրի կամ Ծրագրին մասնակցության դադարեցման պահից Անվանական Քարտը համարվում է անվավեր:

5. Անձնական տվյալներ

5.1. Անվանական Քարտի քարտապանները պարտավոր են անհապաղ տեղեկացնել Յուքոմին իրենց անձնական տվյալների ցանկացած փոփոխության, ներառյալ՝ հասցեի փոփոխության մասին, ինչպես նաև իրենց Անվանական Քարտի կորստի կամ վնասման մասին՝ կորստի/վնասման օրվանից 14 օրվա ընթացքում:

5.2. Ծրագրի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության նպատակով Յուքոմի, ինչպես նաև վերջինիս գործընկերների աշխատակիցները Ծրագրի շրջանակներում ծառայություններ մատուցելիս քարտապանի անձը հաստատելու նպատակով կարող են պահանջել որոշ տվյալներ: Եթե չի հաջողվում հաստատել քարտապանի անձը, ապա աշխատակիցներն իրավասու են հրաժարվել ծառայություններ մատուցելուց և/կամ տեղեկություններ տրամադրելուց:

6. Մասնակցության համաձայնություն

6.1. Անվանական Քարտն ստանալով և/կամ օգտագործելով՝ մասնակիցը տալիս է Ծրագրին մասնակցության իր համաձայնությունը:

6.2. Ծրագիրն իրականացվում է Յուքոմի գործընկերների հետ համատեղ: Անվանական Քարտն ստանալով և/կամ օգտագործելով՝ մասնակիցը համաձայնում է օգտվել Ծրագրի շրջանակներում Յուքոմի գործընկերների կողմից առաջարկվող արտոնություններից և/կամ ծառայություններից՝ պահպանելով նրանց կողմից սահմանված կանոնները: Յուքոմի գործընկերներն ընտրվում են Յուքոմի բացառիկ հայեցողությամբ:

6.3. Անվանական Քարտն ստանալով և/կամ օգտագործելով՝ մասնակիցը համաձայնում է Ծրագրի շրջանակներում Յուքոմից և/կամ վերջինիս գործընկերներից ստանալ առևտրային, գովազդային կամ տեղեկատվական բնույթի ամսագրեր և/կամ էլեկտրոնային նյութեր և/կամ կարճ հաղորդագրություններ և/կամ զանգեր:

6.4. Ծրագրին մասնակցելով՝ բաժանորդը՝ Յուքոմին թույլ է տալիս Ծրագրի շրջանակներում իրեն մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով Ծրագրի շրջանակներում Յուքոմի գործընկերներին փոխանցել իր անձնական տվյալները, ներառյալ՝ անունը և ազգանունը, հեռախոսահամարը, ծննդյան ամսաթիվը, Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ տվյալները:

6.5. Ծրագրին մասնակցելով՝ բաժանորդն ամբողջությամբ ընդունում է սույն Դրույթները:

7. Ծրագրից հեռացում

Ucom-ի միանձնյա որոշմամբ ցանկացած մասնակից կարող է ցանկացած ժամանակ հեռացվել Ծրագրից, եթե վերջինս խախտել է սույն Դրույթները և/կամ չի բավարարում դրանցով սահմանված պահանջները:

8. Դրույթների փոփոխություն

Յուրմն իրեն իրավունք է վերապահում միակողմանիորեն փոփոխել սույն Դրույթներն առանց նախնական ծանուցման՝ փոփոխությունները և/կամ նոր կանոնները Ծրագրի վեր կայքում հրապարակելու միջոցով:

9. Գերակայող լեզուն

Սույն Դրույթները հայերենից բացի այլ լեզուներով թարգմանվելու դեպքում գերակայում է հայերենը: